



ՄԱՐԹԱՅԻ

Ազգային, Բաղաժական, Բանասիրական եւ Զուարճային

Ժող Տարի, Թիւ 40



11 Ապրիլ, 1898

ՊԱՅՄԱՆՆԵՐ. — Ծաղիկի բաժանորդագինն է Տարի 40, Գաւառներու համար 50 դան. : Աւերակներու համար 25, Գաւառացի համար 30 դան. : Հասարակական բաժանորդագրութիւնը քիւի վրայ է, տարեկան բաժանորդագրութիւնը 52 եւ վեցամսեայները 26 քիւ Ծաղիկի : Գրաստանը յանձն կ'առնէ հասուցանել բաժանորդներուն :

Ծաղիկի հրատարակութիւնը ո'ր եւ է ազգային հանդիպի : Ծաղիկի բաժանորդներն իրաւունք ունին 100 այցեխարս նուէր ստանալու : Հանրոգութեան վերաբերեալ յօդուածներ եւ քրակցութեան շնորհակալութեամբ կ'ընդունուի : ՀԱՅՏԵ. — Ծաղիկի վերաբերեալ ամէն ինչ պէ՛տք է ուղղել Պաշտօնական Գրաստան, Կ. Պոլիս, Սուրբ Զատան, քիւ 14 :

ԿԱՐԳՈՒԻՆՔ ԹԷ ԶԷ

Ահաւասիկ երիտասարդութեան խնդրոյ կարգին մէջ անցած խնդիր մը :

Երիտասարդութեան ժողովին մէջ ալ երկու կուսակցութիւն կայ, աջակողմեան եւ ձախակողմեան :

Արական սեռն աջակողմեան է. իգական սեռը ձախակողմեան է :

Այս երկու կուսակցութիւնները մինչեւ այսօր չեն կրցած համաձայնիլ այս խնդրոյն վրայ : Աջակողմեանը՝ չկարգըվինք կ'ըսեն, ձախակողմեանը կարգըվինք կը պօռան, եւ այս պատճառաւ խնդիրը խնդրոց կարգին մէջ կը բանտարկուի :

Եւ տակաւն ասանկ փափուկ խնդիր մը մէկէն ի մէկ լուծելն ալ դիւրին չէ, որովհետեւ շատ մը խմատուն մարդոց կարծիքներն ալ իրարու հակառակ են այս մասին : ասոնցմէ մին կ'ըսէ Թէ՛ կինը մահուընէ դառն է. անդիլէն ուրիշ մը կը պնդէ Թէ՛ կինը տիեզերքին զուլի գործոցն է. ուրիշ մ'ալ կ'ըսէ Թէ՛ ամուսնացողն ապաշխարութեան ճամբան կը մտնէ. եւ ուրիշ մ'ալ կ'ըսէ Թէ ... բայց ի՞նչեր չեն ըսեր կանանց վրայօր :

Մարդուս այս իրարու հակառակ կարծեաց առջեւ կը շուարի կը մնայ, եւ եթէ կարգուած չէ՛ ուխտ կ'ընէ չկարգուելու, եւ եթէ կարգուած է՛ կ'որոշէ կնիկէն բաժնուելու ... բայց կինը բարի եւ առաքինի մէկն է եղեր, որո՞ւ հոգ, մարդը անգամ մը

համոզուերէ որ կարգուիլը աղէկ բան չէ, ա'լ կնկանը աղէկ ըլլալուն կը համոզուի :

Եկու տես որ ամուրի կենաց սկսելուն պէս՝ ամուսնանալու վրայ որչափ բան լսած էր նէ՛ ամուսնանալու վրայ ալ նոյնչափ բան կը լսէ. որովհետեւ եթէ ամուսնանալու ղէմ խօսողներ կան, ամուսնանալու ալ ի նպաստ խօսողներ չկան :

Եթէ ամուսնանալու մէջ դժբաղդութիւն կայ, ամուսնանալու մէջ ալ երջանկութիւն չկայ : Վերջապէս եթէ ամուսնանալու ինչպէս որ կ'ըսէ խելացի մէկը, իր նեղութիւններն ունի, ամուրի կեանքն ալ հաճոյք չունի :

Ահաւասիկ ամուրի եւ ամուսնացեալ ընթերցողք եւ ընթերցողուիք, ամուսնանալու ալ վիշտեր ունի, ամուսնանալու ալ, հետեւապէս մարդս առանց վշտի ապրելու համար ոչ կարգուելու է եւ ոչ ալ ամուրի մնալու է :

Տեսէ՛ք, ինչ եզրակացութեան մէջ ինկանք մարդուս երջանկութիւնը փնտռած ատեններս, այսինքն Թէ մարդս երջանիկ ըլլալու համար անանկ վիճակ մը ունենալու է՝ որ անհնար է ունենալ :

Մարդկային երջանկութիւնն ինչ տեսակ եզրակացութեանց մէջ կը գտնուի ... :

Այդ եզրակացութեանէն զոնէ սա կրնանք հասկընալ որ մարդս կ'ուզէ ամուրի ըլլալ կ'ուզէ ամուսնացած միշտ վիշտեր պիտի ունենայ, երկուքին մէջ ալ անհանգստութիւն կայ. ուստի երկու չարեաց փոքրագոյնը ընդունելու համար երկուքին ալ վշտերը

բովէ քով դնենք ու իրարու հետ բաղդատենք :

Ամուսնացեալն իրիկունը տունը մտած ատենը կնիկը դէմը կ'երնէ ու ինչո՞ւ միս չես բերեր ըսելով խեղճը կը բարկացունէ , ամուրին իրիկունը միտով տուն մտած ատենը մէկը չեղնէր դիմացը եւ թէ որ մէկը երնէ՝ այս միսը հիմա ո՞վ պիտի եփէ ըսելով միսը խեղճին գլխուն կը զարնէ :

Ամուսնացեալն՝ առանց կնիկը հետն առնելու քիչ մը պտըտիլ ուզէ նէ՝ կնկանը կողմէն հազար ու մէկ խօսք կը լսէ . ամուրին պտըտելու ելած ժամանակը կուզէ որ հետը կին մը գտնուի ու չկրնար գտնել :

Ամուսնացեալն առտուն տունէն դուրս ելած միջոցին կնիկը ետեւէն կը վազէ ու այս գիշեր շաք-խառ անպատճառ բերես կ'ըսէ ու խեղճին զուխը կը ցտցունէ . ամուրին դուրս ելած ժամանակը մէկը չեղնէր չըսեր խեղճին որ շապիկ չունիս , այս գիշեր քիչ մը խառա բեր որ շապիկ մը կտրենք :

Ամուսնացեալը կը չարչարիլի ու կը տանջուի երբ որ կնիկն քիչ մը հիւանդ ըլլայ . ամուրին հիւանդ ինչայուն պէս պէտք ի գերեզման կէս ճամբայ առած կ'ըլլայ :

Ամուսնացեալն ամուրինն նայելով կ'ըսէ « երանի բեզ որ զաւակ չունիս եւ գիշերները հանգիստ կը բնանաս » . ամուրին ամուսնացեալին դառնալով կ'ըսէ . « երանի բեզ որ տղաքներդ հետոյ առնելով կիրակի օրերը պտըտելու կ'երնես » :

Ամուսնացեալն սեղանի վրայ կը բարկանայ երբ տեսնէ որ ապապրած կերակուրը իր ուզածին պէս եփուած չէ . ամուրին կը բարկանայ երբ տեսնէ որ իր ուզածին պէս կերակուր չկայ սեղանին վրայ :

Երբ որ պարտատէր մը դուռը զարնէ՝ ամուսնացեալն կնիկն վար կը խրկէ ըսելու համար թէ՝ էրիկս հոս չէ , բայց կնիկը երթալ չուզեր ու խեղճը կը բարկացունէ , մինչդեռ ամուրին վար խրկելու մէկը չգտնելուն վրայ կը բարկանայ :

Դեռ կրնայինք շատ մը բաղդատութեանց մըտնել , բայց ընթերցողներն ձանձրացնելու վախով այս չափով կը շատանանք :

Թո՛ղ ընթերցողք բաղդատեն հիմայ , եւ ո՛ր կողմին վշտերը թեթեւ գտնան նէ՝ այն կողմին յարին :

Իսկ անոնք որ առանց վշտի ապրիլ կ'ուզեն , ինչպէս որ վերը ըսինք ոչ կարգուելու են եւ ոչ ալ ամուրի մնալու են :

ԶԱՏԿԻ ԱՌԹԻԻ

Ընդհանուր սովորութեան համեմատ Զատիկն առն մարդ ինքզինքը կշռել կուտայ , թերեւս մեծ պահքի ժուժկալութենէ որչափ նիհարցած ըլլալը իմանալու մըտքով , (թէպէտ եւ այս մեծ պահքին ժուժկալ կեցող ոչ ոք տեսանք մենք) Ազմօտէ այս առիթէն օգուտ քաղելու նպատակաւ ճշդիւ կշռող մեծկակ կշիռ մը ի դուր բնառելէ յետոյ ածուխի Տէպպօներէն , որոշեց Պէյլիկի խանթար մը առնել որ պատուաւոր ձեռքի մէջ ամենէն վստահելին է :

Ուստի անմիջապէս խանթար մը գնելով , անցուկ փողոցի հրապարակին մէջ եռօտանին կանգնելու կը պօռար .

— Կէ՛լ գանթարա , կէ՛լ գանթարա :

— Գուզում հայրիկ թարթըլիչ ըլլա՞մ :

— Նստէ սղաս . թարթը վէր պագալըմ չու չօճուղու . . .

— Եիրմի պէչ օգկա . . . մաշալտահ քէմիքլի չօճուղ :

— Եէնի՞ օգկա տըր :

— Էօյլէ հա :

— Էյ էսիկ օգկա նէ դատար էտէր :

— Օնուն հիսապընը գասապլար էյի պիլիբ , պիլ սատէ թարթարը :

— Ծօ աղայ տուն հիսապ բրէ քանի՞ օխայ կ'ընչ կոր :

— Մենք թուարանութեան այդ գործողութիւնը դու դաս չառնք հայրիկ :

— Հինգ տարի է դպրոց կերթաս , տահա նոր օխան չե՞ս կրնար կոր փոխել :

— Նոր օխան արդէն հինգաւ անունը հին օխա դըրին , եւ հիմայ կշիռով բան ծախողները հին օխա անուամբ նոր օխա կը կշռեն ընդհանրապէս :

— Էյ ճանըմ գալապալըք էթմէյին . — Կէլին գանթարա :

— Ամանըն , գանթարճը , պիլիմ էվէ ուլաչ տա , տուտուլար , մատմազէլլէրի թարթաըն :

— Էվ ուզագ մը տըր , մարապետ :

— Ամանըն նէյնէն , իշաէ ետիքնտա :

Կէլէյիմ ըսելով Ազմօտէ խանթարը չալկեց եւ տան կնոջ հետեւեցաւ որ մօտակայ տան մը դուռը գարնելով ներս մտան ու երեք չորս մատմազէյներ կշռուելու կըսպասէին :

— Պագսանա գանթարճը պիլի տօղլու թարթաճագըն :

— Մատմազէլ գանթարըմ աւլա ետան ոէօյլէմէզ :

— Հայտէ թաղուկ , իլքին սէն օթուր :

— Եօզ պէն իլքին օթուրամ , Սօֆի թարթըլըն տա , սօղրամ պէնտէ թարթըլըրմ :

— Գա ճանըմ , հա իլքին թարթըլմըլն , հա սօղրա նէ՞ օլուր :

— Ումուր էթտինիզ աման , գանթարճը սէն պէնի թարթ :

— Օթուր պագալըմ :

— Վո՛ւյ օ փիս թահաւանն իւթիւնէ պէն օթուր-
մամ, Գարօլին հօգարտան պիր մինտէր կէթիր:

— Մատամ արգանդաւոր մինտէր էլմէրիր. իքի
օլուրսա օգկա պատար:

— Էյ հայտէ պագայրմ, իշթէ օթուրսում:

— Երբմի պէ՛շ պուշուգ օգկա՝...

— Ֆուլիկ տուտու, շիշման կէօղիւքիւրսին ամա
աղըր տէկիւսին:

— Իւզէրինտէքի էյրէթի բամուզլարը չըգարսա,
պու գատար պիլէ կէլմէզ:

— Աֆ էտէրսին ամա, բէք թէրպիլէսիզ գանթարճը
ըմըշըն, չու օն բարտնը ալ տա կիթ:

— Գա խըյանէթ, տահա պիզ թարթըլմատըզ նէ՛...

— Իզնիմ հօգ բի թարթըլմատըզ պու թէրպիլէ-
սիզէ:

Ազմօտէ մատամը բարկացնելուն զղջացած մեկնե-
ցաւ տունէն եւ գէպի իւր կողմը գնաց՝ ու բազմութիւն
մը տեսնելով սկսաւ դարձեալ պօռալ:

— Կէլ գանթարա, կէլ գանթարա, ուճուզ թարթը-
յօրըզ, հայտէյն աղալար, հաֆիֆ աղըր իւստ իւստէ
օն բարայա պիր ատամ...

— Ուստա Պիարոս կէլին թարթըլալըմ, պագալըմ
կէշէն սէնէտէն պու սէնէտէն նէ՛ գատար եաղըմըզ էրի-
միշ:

— Սիզ հանկը էանաֆտանընըզ, էֆէնտիլէր:

— Դուլումճու էանաֆտանընըզ:

— Էյլէ իսէ գանթարըն հաֆիֆ չէքէր թարաֆընը
չէվիրէյիմ:

— Սէն իլքին պէնի թարթը վէր պագալըմ:

Այս միջոցին ոսկերիչներէն մին Ազմօտէի ականջին
ծոկելով փսփսայ:

— Դանթարճը, պագ պիզ օն քիշիլիզ, օնուսուզտա
թարթըլաճաղըզ ամա, խանութ իսթէրիմ:

— Պուրսաը գուլումճու չարչըսը տէյիլ, չէյլէ տուր
պագայրմ... ալթը օգկա իւշ եիւզ տրամ:

— Նէ սէյլէհօրսուն պէ. գանթարընըն աեարը պօ-
զուգ օլմալը:

— Պու գանթար սէնին վէզնէնտէն տօղրու տուր:

— Իքի սէնէ էվէլ թարթըլալըմ 55 օգկա կէլտիմ:

— Օ վարըթ էվիբ՝ մի իտին:

— Եօզ ամա իքի այ սօղրա էվէնտիմ:

— Տուա էթսէնէ քի եինէ պու գատար պալմըշըն:

— Դանթարճընըն հագզը վար, չէյլէ տուր տա ուս-
տա Սիօսը թարթըն:

— Օն պիր օգկա՝...

— Կինէ պէն ուստա Կարապետէն աղըր կէլտիմ:

— Դուլումճուլուգտան չէքիլմիշ օլմալըն:

— Մութլագ սէնին սըյրպազըլըզա պիլկիճիկին օլ-
մալը:

— Պէ ճանըմ լաղըրտընը դըսա քէսինտէ, պիզիմ
թէլլալ հաճի ուստայը թարթալըմ:

— Կէլ պագալըմ... հէ հէ՛յ... գանթարըն հաֆիֆ
թարաֆը չէքմէօր. աղըր թարաֆընը չէվիրէյիմ...
տօքսան պէշ օգկա...

— Հօ՛ հօ՛... հաճի ուստա պուշէ:

— Տօղրուսունու իսթէրսինիզ ուստալար, պու ա-
ղըրըզ կիւնաշլարըմըն աղըրըզը տըր:

— Ատամ սէնտէ հէր սապահ ժամա օղրարսըն, դա-
ընճանըն իւսթիւնէ պատմաւըն քի կիւնաշլար տէյիլ:

— Ամա կիւնաշլարսի գօրգար հա՛... կէշէն կիւն-
քի չիֆթ իյնէյիլ... չու հանի սօն բէյ ուստա խաշիկ-
տէ գալմըշ ըտը, ինթիսապընը ետգարրմաղա կէօթիւ-
րիւր իքէն եէնիսէն մէզաթ էթմէսիբ՝ մի:

Վերջապէս մեր ոսկերիչները մի առ մի տառն ալ
կշոռեկէ յետոյ կարգը եկաւ ստալը վճարելու:

— Դանթարճը շիմաի գաշ բարա էթտի պօրճուսուզ:

— Օն քիշի օնար բարատան եիւզ բարա:

— Եօզ... պէն սու վէրմէտէն ատամա պիր բարա
վէրմէմ:

— Ֆէպիլէն սաքսըսը տէյիլ քի սու վէրէսին. պէնտէ
սէնէտէ պիր տէֆա սայէնիզաէ պիր գաշ բարա դաղա-
նաճաղըմ:

— Էյ հայտէ եիւզ բարա օլտուն, շիմաիլիք չու գու-
րուշու ալտա, չաբաթ կիւնիւ կէլ ալթմըշ բարայը վէ-
րէյիմ:

— Պէն մըխայըճը չըրաղը տէյիլիմ, գանթարճընըմ:

— Ատամ էրկան ըրիր ուստա Սիոս, ծուռ լեզուին
հեռ հիմա պէլայի հանդիպելու չէ եա ամէն մարդ թող
իր հէրֆանէն տայ:

Եւ յիրաւի ալ ամեն ոք տանաւան բարա վճարե-
լով մեկնեցան եւ Ազմօտէ դարձեալ սկսաւ կէլ գանթա-
րա պօռալ. այս անգամ մօրուսուսուր եւ անմօրուս հինգ
վից երիտասարդներ ներկայացան:

— Դանթարճը, գրական ատամ թարթը՝ եօրսուն:

— Եազըճը՝ մընընըզ:

— Եօզ, կազէթա մուհարրիլէրիլիզ:

— Բէք հաֆիֆսինիզ, գօրգարըմ գանթարըմ ալմա-
եաճագ. հէփինիզի պիրտէն թարթսամ օլմազ մը:

— Տահա էյի օլուր. հրամայեցէք ի կշիւ պարոնայք
Հօրոյ, Սալօնճի, Շըրեան, եւ դու նզուված Գօշօ, անց-
եալ օրուան զարկած թոսէզ մինչեւ հիմայ դեռ կուշտս
կը ցաւի:

— Ախպար ինծի ալ քիշ մը տեղ տուէք որ նստիմ:

— Դուն Մասիսին գիրկը նստէ:

— Էյ ճանըմ, պիթտի մի, չէքէհօրում:

— Օլտու, հայտէ թարթ:

— Օ՛ք... կատան տէօրթ եիւզ տիրհէմ էքսիկ:

Կը լսենք թէ այս առթիւ Ազմօտէ բաւական ստակ
չահեր է:

ԿԱՆԱՆՑ ՀԵՏ Մ'ԻՅՆԱՔ ԶԵՁ ԿԸԼԼԱՆ ՓՈՐՁԱՆՔ

Սիրելի ընթերցող, եթէ ամուսնացած ես, եթէ քու
կինդ քու կամայդ հալառակ վարմանց մէջ տեսնես, ե-
թէ անոր ամէն ըրածն ու խօսածը իր սեռին համար բո-
լորովին անվայել եղած ըլլան, (մտքէդ անգամ չըլլայ որ
անցնես հա), թէ գայն ճամբու բերելու համար չըլլայ որ
եղնես յանդիմանես, թշնամանես, եւ աւելի իրական

փորձ մ'ընել, ասոնց ամենաթեթեւն անգամ անանկ խոչոր փորձանք մը կը լսէրէ զլսուող որ մտքէ անգամ անցնելը խնդրաթիւն է կ'ըսես թերեւս, բայց անանկը չէ, կանանց ամենէն աննշանը ճակատամարտի մէջ գէտ կեցող, իւր հրապարակ կամ սուրբ կողմերէ ուղղող թշնամիէն աւելի անարկու է: Ականջնիւ ինծի տուէք որ բան մը ըսեմ գաղտնի, բայց կանայք չիմանան հա, վերջը զիս ալ կ'ախաղան կը հանեն, աղօթք ըրէք որ ազիտութիւն եւ ինքի կարճութիւն տայ, գուցէ հիմա մէջերնիւ յանդուգն մէկը գտնուի ու ըսէ:

— Էյ մենք էրիկ մարդ ըլլալովնիս հանգերձ, այդչափ անկարգութեանց գէտ բնաւ բան մ'ընելու ազատ չե՞նք:

— Ո՞վ կ'ըսէ թէ ազատ չէք, այո ազատ էք ոչ թէ մէկ բան, այլ քանի մը բան ընելու ազատ էք:

— Որո՞նք են ատոնք:

— Կեցիր որ ըսեմ, ձեր կնոջ մէկ անվայել ընթացքը կը տեսնէք (բացառութիւնները չառնեն, մանաւանդ մեր ազգին մէջ քիչ մը աւելի է, արդարեւ այս տեսութիւնը ընդհանուր կանանց վրայ ըրած ասեմնիս չառ բարեբաղդ եմք որ Եւրոպացի կիներէ խիստ չափազանց անխիւ ձերբերու տէր կանայք ունինք որոնց վրայ ալ տեսութիւնս պիտի ընենք յաջորդ յօդուածով մը) կնոջը մէկ անվայել ընթացքը կը տեսնես ըսի, էյ մարդ ես զգացում ունիս, այրական պատուասիրութիւնդ կ'արթննայ, կը ցամառու, այս միջոցին ազատ ես որչափ որ կ'ընաս, դիտե՛ս ինչի, ակռաներդ կ'ընկու, կ'ընդ որուն աչքին դուն մըջիւնի մը չափ չես երեւար, բնաւ ականջ չկախեր, դուն ալ վայ իմ բարկութիւնս կ'արհամարհէ կոր ըսելով երկրորդ անգամ եւ աւելի ուժով կը բարկանաս, կը նայիս որ արեւնդ չմէնաբօցէրի արագութեամբ կէս չըջան կ'ընէ կոր, կզգաս որ գէտ ի աչքերդ բան մը կ'ընէ կոր, այն տառն ազատ ես ամենայն զօրութեամբ լալու, հեծելու, ինքզինքդ վայելու, տեսա՞ր, որչափ բաներ ընելու ազատ ես, թէեւ ասոնց բոլորն ալ ի վնաս քո անձին է, բայց բարկութեանդ մէջ փոխանակ ատոնց եթէ ելնես սաստեւ, թշնամանես եւ կամ ծեծես, աւելի վնասաբեր կ'ըլլան քեզի, ինչպէս որ ըսի աղօթք ըրէք որ գործին մէջ ազիտութիւն կայ, ապա թէ ոչ այդ հիմակու ունեցած քիչ մը ազատութիւննիդ ալ կ'աչկանս գելով, կ'ախպեն գծեղ իրենց ամէն ձեր կամաց հակառակ գործերուն վրայ ակամայ խնդալու, (Աստուած ընթերցողներս այդ տեսակ կիներէ ազատ պահէ) վասն զի եթէ չընես, գիտե՛ս ինչ կ'ընեն, անաւաստի հոս է խնդիրը: Սրտերնիդ ամուր բռնեցէք, մէջերնիդ վախկոտ կայ նէ թող ականջները դոցէ, մեծ գաղտնիք մը պիտի պատմեմ ձեզ, կանանց սեռին մեծագոյն մասը ամուսնութեան վրայ այնչափ քաղցր զգացում ունի, էրկան վրայ այնչափ անհամեմատ սէր ունի որ եթէ անոր յախտնական հրաժեշտ տալու պէտքն զգայ զոնէ համագամ կերակրով մը զանի ճամբել կուզէ, մէջը ի՞նչ գնէ նէ կը հաւնիս, սիրելի ընթերցող, զեռ տառը պատասխանելու ժամանակը չեկաւ, պատմութիւնէս ամէն բան կը հասկնաք:

Ասկէ երկու տարի առաջ հետեւեալ դէպքը կը պատահի:

Կնոջ մին էրկանը տուած բարի խրատներէն ձանձրացած (դիտէք ա՛, բարի խրատները քիչ մը կծու կ'ըլլան), գեղազործի մը կ'երթայ ու կ'ըսէ,

— Բարեւ Պ. գեղազործ,

— Աստուծոյ բարին, տիկին,

— Տանս մէջ մուկերը խիստ չառ բազմացած ըլլալով չափազանց անհանգիստ կ'ընեն կոր, կաղաչեմ ինծի անանկ գեղ մը տայիր որ ասոնց ամէնքն ալ բնաջինջ ըլլային:

Դեղազործը՝ կնոջ չափ տխար չըլլալուն կզգուշանայ այսպիսի անխոհմտութենէ մը եւ ուղղելով ստուգել իրողութիւնը, կնոջ այրը՝ որ իր ալ բարեկամը եղած կըլլայ բարեբաղդաբար, կը կանչէ ու կ'ըսէ թէ իրա՛ւ ձեր տունը չառ մուկ կայ:

Այրը կը պատասխանէ թէ բնաւ մուկ չկայ:

— Էյ հապա կ'ընդ չառ անհանգիստ կ'ընեն կոր եղեր, որուն համար գալով ինձմէ գեղ ուղեց:

Այրն իսկոյն կը հասկնայ թէ իւր կինը անհանգիստ ընողը ոչ թէ մուկերն ալ իր իրաւացի յանդիմանութիւնսն են եւ թէ բնաջինջ ըլլալու առարկայ եղող դո՛ր ինք պիտի ըլլայ, չնորհակալ կ'ըլլայ դեղազործէն այսպիսի վաղտնիք մ'իրեն հաղորդած ըլլալուն եւ այդ քսամունքի դործը անձամբ ստուգելու համար, կը պատուիրէ գեղազործին որ եթէ անգամ մ'ալ գալու ըլլայ տալու հաճութիւն ցոյց տայ եւ անվնաս գեղ մը տալով իրեն ալ իմացնէ:

Եւ արդարեւ կինը իւր այս ձեռնարկը չյաջողելուն վրայօք վերջին աստիճան արատւմ, հետեւեալ օրը գեղագործին առջեւէն կ'անցնի, սա կը կանչէ կինը եւ մարդու չիմացնել պատուիրելով գեղ մը կուտայ:

Կինը ուրախութենէն զինուցած տուն կը վազէ եւ պատուական ընթերթ մը կ'սկսի պատրաստել:

Այրը երեկոյն վերադարձած միջոցին դեղազործը կ'իմացնէ թէ բոլորովին անվնաս գեղ մը տուած է:

Այրը տուն կը հասնի եւ սեղանին գլուխը անցնելով կը հրաւիրէ կինը որ ինք ալ գայ եւ մէկտեղ ճաշեն, կինը անխոթակ չունենալը յայտնելով կը թողու որ միայն այրն ուտէ: Այրը կատարեալ վարպետութեամբ մը կերակուրներուն լեղի համ մը ունենալը յայտնելէն վերջը մէկ կողմին վրայ կիցայ իբր թէ թոյնը սարսափելի ազդեցութեամբ մը զինքը ընկճած ըլլայ:

Այս միջոցին կնոջ ուրախութիւնը չեմ կրնար նկարագրել, դուք ալ մի փափաքէք որ նկարագրեմ, իւր դերը այս չափով չի լինար, իւր ըրած ոճրագործութիւնը չյայտնուելու համար կուզէ չունսով մը կախել այրը ու այնուհետեւ պոռալ կանչել իբր թէ նա ինքզինքը կախած ըլլայ, հետեւաբար սեղանէն կախուած երկաթ օղակէն չուսն մը կ'անցնէ, ծայրի հանդոյնն ալ էրկանը վիզը անցնելով կ'սկսի բոլոր ուժովը քաշել, բայց ինչպէս որ ըսինք անմտութիւննին Աստուած պատկաս չընէ, չտեսներ որ այրը չուսնը հաստատուն տեղ մը կ'ապած էր կը նայի որ վեր չեկնէր, կ'ըսէ:

— Իմ այրս այդչափ ծանր չէր:

Բայց չկրնալով իր հետաքրքրութիւնը յագեցնել, կը մօտենայ նայելու, եւ յանկարծ սարսափով եւ զողալով

եւս եւս կ'երթայ, զի կը դիտէ որ չուանը էրկանը վզէն ելած եւ ամուր տեղ մը կապուած էր:

Ասոր վրայ այրն ելլելով պատուականապէս կը վարձաւորէ կինը եւ յետոյ ոտական կանչելով կը յանձնէ:

Հասկցար հիմա սիրելի ընթերցող, կանանց ինչ տեսակ գոյն ունենալին (բացառութիւնները մէկդի) վայրկեանական անվայել հաճոյից համար իրենց էրկաները զոհելու իրիզ չեն ընել մինչդեռ պարտէին ոգւով չափ սիրել, ուստի չըլլայ որ կանանց հետ իյնաք, եւ դուք ալ հողինիդ պատիհալ վրայ տաք:

Փ Ո Խ Ս Տ Ա Կ

Բարեկամներէ փոխ ստակ ուզողին ընդունած պատասխանները

Մեծապատիւ բարեկամ,

Ձեր նամակն ստացայ, ցաւօք սրտի կը յայտնեմ թէ ես ալ նեղ վիճակի մէջ եմ, եւ Ձեր փոխ ուղած գումարը չպիտի կրնամ տալ:

Ձերդ

Սիրելի բարեկամ,

Կը փափաքէի ձեր խնդիրքը չմերժել, սակայն պարտաւորուած եմ ձեզի յայտնելու որ այսօր տեղէ մը ստակ առնելու յոյս ունէի եւ այս յոյսս ի գերեւ ելաւ, որով չպիտի կարենամ կատարել Ձեր խնդիրը:

Յարգանքօք

Ազնիւ բարեկամ,

Քանի մ'օր ստաջ ըլլար նէ կարելի էր, բայց Ձատիկն վրայ գալուն պօթին պաշտամայի տուած եմ, հետեւաբար անկարելի է խնդիրքդ կատարել:

Միշտ Ձերդ

Ազնուաշուք էֆէնտի,

Յաւօք սրտի կը ծանուցանեմ որ եթէ ստակ ունենայի կուտայի: Ներեցէք որ չունիմ:

Մնամ խորին մեծարանքօք

Արժանապատիւ Տէր Հայր,

Յաւօք սրտի կը յայտնեմ որ ստակ չունենալուդ վրայ շատ ցաւեցայ, ինչ ընեմ ձեռքէս բան մը չգար:

Մնամ համբուրիւ Ս. աջոյդ

Գերընաիր բարեկամ,

Ձեր պատուական նամակէն կը տեղեկանամ թէ ստակ չունիք եղբր, խնդրեմ այս մասին գործը զոյդ բռնեցէք

որ փոխառութիւնը մէկտեղ ընենք: Սէնէտ, սէքէթ ինչ որ պէտք է՝ պատրաստ եմ ստորագրել, Փայիզին ալ շատ մի նայիր: . . . բարեկամներ իմ:

Անհամբեր պատասխանիդ կ'սպասեմ

Յարգոյամեծար տէր,

Ստակ չունենալդ ոչ նուազ ցաւ պատճառեց ինձ, յոյս ունիմ որ տեղէ մը ստակ կուգայ եւ բան մը կ'ըլլայ, բայց եթէ գալու ալ ըլլայ պարտաւորներս լէօպէթի կեցած են:

Ընդունեցէք եւն

Էֆէնտի,

Պաշտա գափույս պապ . . .

(Կարծեցեալ փոխառումներ)

~~~~~

## ԵԱ ՊՕՆՃՕՐՆՕ ԸՆԵԼՈՒ Է ԵԱ ՏՈՒՆԸ ՁԳԵԼՈՒ ԵՐԹԱԼՈՒ Է

Ռուրիկ աղա, քովի Ազապի հանրմին չարխան տամ տէ այսօր ինձի անանկ չարխան մը առնէիր:

Ինչո՞ւ համար կնիկ, տակաւին երկու ամիս չկայ լիրա մը տուէնք, քանի՞ անգամ գլուխդ զրիր, մէկ Ձատկին առուուն ժամ զացիր:

— Էյ ի՞նչ ընեմ, ան հիմա պարիթ է:

— Քանի մը ամիս տահա խուլանմիչ եղիր տէ բան մը կ'ընենք:

— Ո՛ւշ խնդ եմ գահեր, վրաս խնդացնեմ պիտի, հիմակուան մօտան պաշխա է:

— Էյ չիմտի պիր լիրա տահա մը վէրմէլի, պէն էօյլէ շէյ պիլմէմ . . . սա հինը տուր պարէմ տէ տանիւթ թրամբա ընեմ:

— Ես անցած չարթու էսկիծի Եահուտիին ծախեցի:

— Կնիկ, դուն ինձի խնդեցնես՝ պիտի, մենք ստակը գետնէն կը ժողվենք կոր, քանի ծախեցիր նէ ստակները ինձի տուր պարէ:

— Քանի փարա բռնեց քի, տաններկու զրուշ տուաւ ան ալ բուտրա առի, հազիդծիին պարտք ունէի, սանկ նանկ խարճեցի:

— Էօյլէ ես, պիզ պիր լիրա վէրէլիմ չարգայա, կէթիրէլիմ, սիզ ծն իքի զրուշա էսկիծիյէ սաթըն, պէն էօյլէ չարխա մապգտ պիլմէմ, պիր այ տըր այաղըմա պիր բօթին ալամայօրըմ:

— Աման, սուս եղիր, պոն մը եղայ ո՛ւշ, ի՞նչ կ'ըլլամ կոր, սիրտս կը խառնուի կոր, էօ՛՛՛:

— Հայ Ալլահ պէլասընը վէրսին. աթթիյէ պիր տէ հէքիմ փարասը վէրտիրէճէք պիզէ . . . Էյ կայնէ կնիկ, ինքզինքդ բռնէ քիչ մը. ուղածդ չարգա ըլլայ այս գիշեր կը բերեմ:

- Էօֆ . . . կայնէ նայիմ, քիչ մը դիտես քի սիր-  
տըս նստեցաւ :
- Սա իլիմօնը խած քիչ մը միտէ՞ չտկէ :
- Չէ, բան մը չեմ ուզեր սանկ քիչ մը նստիմ :
- Էյ ես ուշ մնացի սա չարխային էօրնէկը տուր տէ  
երթամ :
- Նա', չես մոռնար ես :
- Ինչու մոռնամ հանըմս, խենդ եմ զահեր :
- Նէ սանտըն Ռուբիկ աղա :
- Ես պօնծօրնո ընելու է, ես տունը ձգելու երթալու է :

## ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ս. Պատրիարքը Զատիկի կիրակին նախագահեց արա-  
րողութեանց Մայր եկեղեցւոյ մէջ, պատարագեց եւ  
քարոզեց քրիստոնէական է՛ն բարձր առաքինութեան,  
Համբարութեան վրայ որոյ մրցանակն է Յարութիւն եւ  
յաւիտեանական կեանք :

Պատարագէն յետոյ Ս. Պատրիարքը Պատրիարքա-  
րան ելնելով, Տնօրէնէքի տրարողութիւնը կատարեց եւ  
ազգայնոց շնորհաւորութիւններն ընդունեց :

— Կիրակի Զատիկի տօնը շնորհաւորեցին օտար աղ-  
գաց դեսպանք, թարգմանք եւ գործակատարք, ոմանք  
այցեքարտով եւ ոմանք ալ անձամբ անձին :

— Որոշեալ ժամուն եկան նաեւ շնորհաւորել Ս. Զա-  
տիկը ընդունելութեան արահին մէջ, բոլոր ազգային  
պաշտօնեայք, Վարչութեան ժողովք, Թաղ. Խորհուրդք  
եւ այլ պատուաւոր ազգայինք : Աստնապետ Գուրգէն  
էֆ. խնդակցեցաւ Ն. Սրբաշնութեան եւ Աղգ. Վար-  
չութեան, իրենց տուած աշխատութեանց եւ յառաջա-  
դիմութեանց համար : Ի պատասխանի Ս. Պատրիարքը  
շնորհակալ եղաւ իւր անձին նկատմամբ եղած գնահա-  
տումներուն համար, իւր Պատրիարքութենէն ի վեր  
շնորհիւ Վեհ. Կայսեր եղած յաջողութիւնները յիշելով  
մի առ մի վերջացուց բարեմաղթութեամբք Վեհ. Կայսեր  
համար, Ազգին համար, ծափահարութիւններով :

### ԱՅՅՅԼՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԱՏՐԻԱՐԿՆԵՐՈՒ

Ս. Պատրիարք Հօր Ս. Զատիկի առթիւ շնորհաւորե-  
լու եկան. Բշ. Պուլկարաց Ամեն. Էկզարքն Տ. Իսէֆ  
Սրբազան, երեք քառորդ ժամ տեսնուեցան Փրանսերէն  
լեզուաւ, կրկին ողջագուրանքով եւ Էկզարքն իւր հե-  
տեւորդներով իջաւ Մայր եկեղեցին ուր դպիրք շարա-  
կաններով ընդ առաջ եկան, ուր աղօթեց եւ օրհնեց ներ-  
կայ ժողովուրդը : Եկաւ նաեւ Հայ Հռոմէական ազգայ-  
նոց Կ. - Պատրիարք Գերբըջ. Տ. Ազարեան Սրբազան  
իւր հետն ունենալով Արհի. Սահակ Արքեպ. Հաճեան եւ  
Գեր. Տ. Աշճեան Վրդ. եւ Վարչ. ժողովոյ անդամք, հոն  
սիրալիր խօսակցութիւններ տեղի ունեցան գրական,  
պատմական եւ ընկերական նիւթերու վրայ :

Գ. Միջօրէին Ս. Պատրիարք Հայրը Զատիկի շնոր-

հաւորութեան գնաց Յունաց Պատրիարքին. Յունաց  
բաղմութիւն մը հաւաքուած էին Ֆէնէրի Պատրիարքա-  
րանի շուրջ՝ ընդունելութիւնը մեծահանդէս եղաւ : Երե-  
սունէ աւելի քահանայք եւ վարդապետք ընդ առաջ ե-  
կան Տ. Մաղաքիա Սրբազանին. Ման. Տ. Կոստանդինոս  
Սրբ. իւր հիւրն ընդունեց ընդունելութեանց յատկացեալ  
մեծ արահին դռնէն, եւ Պատրիարքունք երիցս ողջա-  
գուրելով շնորհաւորեցին Ս. Զատիկը, Փրանսերէն խօ-  
սակցեցան կրօնական, թէմական, մետրապօլիտական եւ  
եկեղեցական՝ պատմական նիւթերու վրայ, տեսակցու-  
թիւնը մէկ ժամէ աւելի տեւեց : Ս. Պատրիարքը առաջ-  
նորդուեցաւ Մայր եկեղեցի, ուր Տ. Մաղաքիա Սրբա-  
զան եւ իւր հետեւորդք համբարեցին Խորանը, Աւետա-  
րաններն եւ Ս. Աստուածածնայ շատ հին պատկեր մը :  
Յետոյ ժողովուրդին դառնալով քարոզ մը տուաւ Քրիս-  
տոնէական սիրոյ վրայ, եւ Քրիստոնէից եկեղեցիներուն  
իրարու հանդէպ անկախ մնալով հանդերձ քրիստոնէա-  
կան եղբայրակցութեան վրայ : Վերադարձին Ամենապա-  
տիւ Տ. Կոստանդինոս Պատրիարքն ծանոց թէ փոխա-  
դարձ այցելութեան պիտի գայ Ուրբաթ օր :

Ս. Պատրիարքը իր հետեւորդներով դնաց Սադրզ ա-  
ղաճ մեր Հայ-Հռոմէական ազգայնոց Կ. - Պատրիարքա-  
րանը, ուր սիրալիր ընդունելութիւն գտաւ եւ կէս ժա-  
մու չափ խօսակցութիւն մը տեղի ունեցաւ զանազան  
նիւթերու վրայ : Հայ ազգի երկու պատրիարքները բաժ-  
նուեցան երիցս ողջագուրելով զիրար :

Անտի պատրիարքական թափօրը ուղղուեցաւ երթա-  
լու Օրթադիւղ փոխադարձ այցելութեան Ամեն. Տ. Եո-  
սիֆ Պուլկարաց Էկզարքին ուր մեծ ընդունելութիւն  
գտաւ, եւ առողջաբանական խօսակցութիւն մը տեղի  
ունեցաւ յանձին Տէր Մաղաքիա Սրբազանին : Ժամը  
12 ին Ս. Հայրը Բերա իր բնակարանը դարձաւ :

Աւագ չարաթ իրիկուն Կայս. Պալատէն գրով մը  
Ս. Պատրիարք Հօր յանձնուեցաւ 250 ոսկիի դումար մը,  
զոր Ն. Կ. Վերափառութիւն իր անձնական գանձէն կը  
շնորհէ Պատրիարքարանի համար Զատիկի առթիւ :

— Կայս. Անձնական Գանձուն կողմէ 200 ոսկի ալ  
Հայ Հռոմէականաց Պատրիարքարանը զրկուեցաւ :

— Աւագ չարաթ իրիկուն Ոստիկանութեան դուռը  
մարդ մնացած չէր մինչեւ այն օրն հասած հայ գաղթա-  
կաններէն : Ամէնքն ալ արձակուեցան :

— Ա. Գործակատար Տէր Ներսէսեան էֆ. Կայս.  
Պալատ տարաւ երկու գիր, մին պարունակելով 25 աղոց  
ցուցակն ու յարակից թագրերն, եւ միւսը շնորհակալու-  
թեան ուղերձ մը Կայս. նուէրին համար :

— Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ Սանիյէի Բ. Աս-  
տիճան շնորհել Պատրիարքարանի Ա. Գործակատար Տէր  
Ներսէսեան Տիգրան էֆէնտիի, ի վարձ իր բարուք ծա-  
ռայութեանց : Մեր խնդակցութիւնը կը յայտնեմք Տէր  
Ներսէսեան էֆէնտիի՝ Կայս. այս շնորհաց արժանանալուն  
առթիւ :

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Միացեալ Նահանգաց Մերակոյտն 21 ի դէմ 67 ձայնով ընդունեց արտաքին գործոց յանձնաժողովին տեղեկագրին եզրակացութիւններն որոյ գլխաւորք են. — Քուպայի ժողովուրդն ազատ եւ անկախ է: Մ. Նահանգներն պիտի հրաւիրեն Սպանիան կղզիէն քաշել իր զինուորներն եւ մարտանաւերն, եւ հրամարիլ կղզիին վրայ ունեցած իշխանութենէն: Մերակոյտն ընդունեց նաեւ յանձնաժողովոյ փոքրամասնութեան եզրակացութիւնն, որ կը պահանջէ ճանչնալ Քուպայի Կառավարութիւնը: Մերակոյտն հրաւիրեց գնխադաս Մաքինիի այս պայմաններով վերջնագիր մը զրկել Սպանիոյ:

— Ամերիկեան Երեսփ. Ժողովը երկուշաբթի ի նկատ առաւ եւ 155 ի դէմ 179 քուէով ընդունեցաւ. Քուպայի ինդորոյն վերաբերեալ այն արդումները զոր Մերակոյտն ըրած էր, բայց մերժեց այն որոշմանը որով Քուպայի ապստամբներուն Կառավարութիւնը կը ճանչցուէր իբրեւ անկախ հանրապետութիւն:

— Յետ մի քանի քուէարկութեանց, Երեսփ. Ժողովը ու Մերակոյտը համաձայնեցան հետեւեալ որոշման վրայ. — Քուպա է եւ լիակատար իրաւամբ պարտի ըլլալ ազատ եւ անկախ: Միացեալ Նահանգաց պարտքն է պահանջել որ Սպանիա թողու Քուպայի վրայ իր իշխանութիւն, եւ անյապազ ետ քաշէ իր ցամաքային եւ ծովային զօրքերը Քուպայէն: Մ. Նահանգները կը մերժեն Քուպա Ամերիկայի հետ միացնելու ամէն գաղափար: Խորհրդարանը իրազօր իշխանութիւն կուտայ Նախագահին՝ Ամերիկայի ցամաքային եւ ծովային բոլոր ուժերը գործածելու սոյն որոշման գործադրութեան համար:

— Նախագահ Մաքինիի վաւերացոյց Մերակոյտին եւ Երեսփ. Ժողովին միահամուռ սուած որոշումները: Այս որոշումներուն մէկ օրինակը Վերջնագրի ձեւով յանձնուեցաւ Սպանիոյ զեսպան Մ. Բօլօ ար Պարնապէի, որ անմիջապէս խզեց յարաբերութիւններն եւ իր անցադրերն ուղեց մեկնելու համար Միացեալ Նահանգներէն:

## ՆՈՐ ԱՅՔԲԷՆԱՐԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ. —

Իզմիրի Մամուրեան սպարանէն հրատարակուած սոյն Քերականը մէքոսով պատրաստուած գործ մը է, եւ լսուագոյնը նմանօրինակ հրատարակութեանց մէջ:

Գիւն 20 փարա:

## ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Ազգային եւ օտար վարժարաններու մէջ դաստիարակութիւն ձեռնարկելու հրապարակին վրայ երկարատեւ փորձառութիւն ունեցող պատուաւոր անձ մը, Անգլիերէն եւ Գաղղիերէն թղթակցութեանց եւ Տոմարակալութեան գործնական գասեր տալու պատրաստ է: Դիմել խմբագրատուն:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՊԱՆՏՈՒՆԵԱՆ ԳՐԱՏԱՆ  
Սուրբան Համալ ճառարի թիւ 14, Կ. Պոլիս

Ե. ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

## ԲԱՌԱՐԱՆ

ՖՐԱՆՍԵՐԷՆԷ - ՀԱՅԵՐԷՆ

Գիւն 22 Ղրշ.

Սոյն Ֆրանսահայ բառարանը յորինուած հետեւողութեամբ Լիդուէի տիեզերական բառարանէն, կը պարունակէ Ֆրանսերէն լեզուին գրեթէ բոլոր բառերն իրենց բոլոր առումներով, սրպէս եւ ամենէն գործածական ոճերն: Տէմիրճիպաշեան էֆէնտի բառաշինութեան մասին իւր ունեցած մասնաւոր յարմարութեամբն որով բազմաթիւ բառերով ճոխացուցած է հայ լեզուն, գտած է լեզուին պակասած գրական, զեղեցկադիտական, իմաստասիրական, գիտական եւ արհեստական բառերուն հայերէններն, այնպէս որ կատարեալ բառարան մը կրնայ համարուիլ Բառարանս ունեցած այս երբեակ առաւելութեամբ, այսինքն առաւելութիւն Ֆրանսերէն բառից, առաւելութիւն նոր առմանց, առաւելութիւն 15—20,000 նորակերտ հայերէն բառից:

Այս բոլոր առաւելութեամբ Ֆրանսահայ Բառարանս. որ կը պարունակէ իր 1000 երես, կազմեալ կը ծախուի անօրինակ գնով:

ՀՈՒՆԻ - ԳՐԱՆԻ - ՍԷՅՈՒՆ - Կ. ՊՈԼԻՍ

## ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՅԻ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

Ճեղայ պէյ խանի դրան կից թիւ 10

Ամենէն ընդարձակ թէյի վաճառատունն ի Կ.

Պոլիս, որ ճիւղեր ունի Օսմ. Տէրութեան ամէն կողմերը: Գաւառաց ապսպրանքները փութով եւ խնամով կը գործադրուին: Ձինական, Հնդիկ, Ճալայի եւ Սէյլանի ընտրեւադոյն թէյք, ուղղակի բերուած հոս: Թէյի նոր հունձքն սկսած է գալ: Զգուշացէք սոյն վաճառանիշին կեղծերէն:

Փնտուել ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ստորադրութիւնը:



# ԿՈՐՈՒՍԵԱԼ ԿՏԱԿԸ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

## ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

— Պարոն Տիմիթրո իմ մեկնած պահուն ապսպրեց որ երբ պարոն Պետիկ գայ, իրեն ըսեմ որ «գլուխդ քարին զարկ մինչև որ պայթի», է՛, հիմա դուք ըսէք, մեծայարգ տէր իմ, այս տեսակ խօսք մը կարելի էր ըսել այնպիսի մեծասիրտ եւ վեհանձն մէկու մը առանց փառաբոր սպասակ մը կամ լաւ սեղաւորուած կից մը ուտելու :

— Հարկաւ դու ալ չգրուցեցիր այդ խօսքը :

— Ահա այդ ալ անկարելի էր, վերջը պարոն Տիմիթրո կամ քէն պիտի պահէր եւ կամ ինք պիտի զարնէր ապսպրել, չարն, անշուշտ եւ որ այն իրիկունը մեծ փափաք մ'ունէր զիս խօսելու, բայց, փա՛ռք Աստուծոյ որ պարոն Պետիկին լաւ կողմին հանգիպեցանք եւ երբ պարոն Տիմիթրոյի խօսքերն իրեն հաղորդեցի աւելի գոհ մնաց քան թէ զայրացաւ, ո՛հ ահաւասիկ շոգենաւր եկաւ :

Եւ յիշաւի վերին Վոգորի համար կամուրջէն մեկնող վերջնիկը շոգենաւր այդ միջոցին Մեսար պուրնուէն մեկնելով Եէնի մահալլէի նաւամատոյցին կը մօտենար : Նաւամատոյցին յառաջամասին վրայ քանի մը բեռնակիրներ, բեռնակրութիւն ընող շատ մը բոկոսն աւղաքներ, նաւամատոյցին պաշտօնեայնիք եւ իրենց սպարանքը շոգենաւուն զուխը քիչ մ'աւելի սուղ վաճառել ուզող քանի մը ձկնորսներ միայն կը գտնուէին : Իսկ նաւամատոյցի վանդակապատին միւս կողմը խուսն եւ երկսեռ բազմութիւն մը հաւաքուած շոգենաւուն մերձեցման կը սպասէր : Ամէն տմառ Եէնի մահալլէ օդափոխութեան գացողներուն եթէ ոչ ընդհանուր, գէթ մասնակի ցտցահանդէսը կրնանք համարիլ այդ բազմութիւնը, որուն հոն սպասելը թերեւս աննպատակ ալ չէր : Քանի մը տարէց կիներ, բազմաթիւ երիտասարդ տիկիններէ, մեծ մասամբ երիտասարդուհիներէ եւ բաւական թուով ալ 8—10 տարեկան տղաքներէ կը բազկանար այդ բազմութիւնը, որուն մէջ չմոռնանք թուել նաեւ քանի մը հասակ պատանիներ, որք անշուշտ իրենց զրպրոցական արձակուոյթին պատճառաւ հոն կը գտնուէին : Այս բազմութիւնն ամբողջ իրենց ընտանեաց այր անգամոց դաւաճեան կը սպասէին :

Կիներն իրենց տմոռնոց կը սպասէին որ զայն համոզելով քիչ մը Զբօսարանը կամ Բաղար-պաշի նստէին կամ զբօսնէին : Իսկ մանուկները ու տղայք իրենց հարց կամ մեծերուն ակնդէտ կը սպասէին որ իրենց ձեռքը գտնուած ուտելիքները տուն տանին, անշուշտ կարել-

ւոյն չափ եւ յայտնի չըլլալու աստիճան անոնց համը ճամբան հայելով :

Վերջապէս շոգենաւր մերձեցաւ նաւամատոյցին եւ սկսաւ մեծաշուք իր համբարած շոգին պարպել, գեռ իւր ճամբորդներէն եւ ոչ մին դուրս հանած : Ուղեւորաց ելքն սկսաւ, ամենէն աչքի զարնող կէտն սա էր որ, երիտասարդներն եւ անոնք որ իբր քաւայն երեւիլ կը ցանկային ամենէն առաջ դուրս կը ցատկէին, եւ անոնցմէ ետքն էր որ սկսաւ տարեցներու եւ ընտանեաց բարի հայրերուն ելքը : Այս վերջնոց ամենուն ձեռքն ալ մէկ մէկ ձեւմակ տոպրակ կար կուշ ու կուռ լեցուած, եւ կային ալ որ աւելի կոկիկ ըլլալով պայուսակներու մէջ զետեղած էին իրենց գնումները : Հազուադուստ չէին նսեւ անոնք, որոց երկու ձեռքերն բեռնաւորուած էր :

Օհան՝ Զբօսարանի պատշգամբին նաւամատոյցին կողմի անկիւնը նստած ակնապիշ «կը դիտէր այս խառնիխառն բազմութիւնը, բայց միշտ իւր նայուածքը սեւեռուն հանգամանք մ'ունէր, ի նշան իւր ներքին մտահոգութեան ու խորհրդածութեան :

Շոգենաւէն ելլողներուն ո՛չ աճապարող դասակարգին հետ նաւամատոյց ելան նսեւ մեր արդէն ծանօթ Հաճի Կարապետ տղան, որուն աջ ձեռքը կը գտնուէր կողով մ' ելակ եւ ձախը պայթելու աստիճան լեցուած, ջուրէն նոր ելած կարապի մը սղլտակութեամբ տալրակ մը : Իսկ իւր անբաժանելի հովանոցը թեւին տակ առած էր :

Օհան զինքն նշմարելով բազմութեան մէջ, նշանալի զինքը հրաւիրեց ի Զբօսարան : Հաճի աղա՝ որ արդէն շոգենաւուն պիւֆէէն շոգին առած էր, ինչպէս կ'ըսեն ռամիօրէն, սիրով այս հրաւերն ընդունեց եւ մտաւ Զբօսարան : Իր ընտանիքէն ոչ ոք գտնուելով ուղատող բազմութեան մէջ, հարկադրուեցաւ բեռներն ալ միասին բերել :

— Օ՛հ, Հաճի աղա, հրամայեցէ՛ք ձայնեց աղջիկ Յովսէ, զինքը զիմաւորելով եւ անշուշտ Օհանի աչքը մանկուռ դիմամբ անոր ձեռացը բեռները անկելով :

— Բարբրիկուն Աստիկ աղա, կարծեմ այս գիշեր դարձեալ օդի խմելու գիշերդ է որ սեղանիդ զուխը բազմիր ես :

— Ձէ՛, սանկ քիչ մը ժամանակ անցնելու համար եկայ, Յովսէն ալ սկսաւ արտառոց բաներ պատմելով սիրտս սեղմել, ըսի որ մեր Հաճի աղան նորէն որչափ ըլլայ հին բարեկամ է, ան մինակ եւ մինակ մնալուս միասին ժամանակ կ'անցնենք :

— Շատ աղէկ եւ ըրեր, բայց իբրեւ ես քեզի քէն ունէի, մէկ մ'ալ քեզի հետ օդի չպիտի խմէի :

Շարունակելի

Արտոնատէր Ա. ՍԱՐԳՍԵԱՆ

ՏԳԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԵԱՆ

(Նախկին ՊԱՂՏԱՍԻՍԱՆ Տպարան)

Կ. Պոլիս, Մարտի Համալ 14.